

ՊԱՅՄԱՆՔ

ԳՈՒԼԱՐԻՍ

Տարեկան 12 ֆր.

Հեղատուայ 6 ֆր.

ԱՐՏԱՍՈՂՄԱՆ

Երկու քիւրակի ծառայ

Տարեկան 14 ֆր.

Հեղատուայ 7 ֆր.

ԱՍԵՐԻԿԱ


Տարեկան 2.60 Տօլար

Հեղատուայ 1.50 »

ԿԱՆԻԿ

Ծանոցման տողը

20 սանիմ



ԼՐԱԳԻՐ

ԱՋԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՅԱՆ

ԿԸ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՈՒԹԻ ԵՒ ՀԱՐԱՐ

ՀԱՍՏ

Redaction du journal

«travounk»

VALUNA (du 4 1/2 1/2)

Редакция

на ПЕЧАТНИКЪ

«Р БУНК»

ВАРНА

Գրութիւնք եւ չեն

որոշիր

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՆՈՒՐԱԿԸ

ՎԵՆ. Կաթողիկոսին առժամեայ դիւանապետ Տ. Տաճատ վարդապետ երեքշաբթի օր քաղաքս ժամանած ըլլալով, Եւրոպիոյ հայ գաղութներուն կը ներկայանայ հետեւեալ կոնդակով

ԿՈՆԴԱԿ

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ԲՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՈՒՐԱՆ ԱՍՏՈՒԹՅՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊՈՍ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՐԵՐԱՐ ԱՌՈՒՅՆ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՍԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒԼԻԿԷ ԷԶՄԻԱՍՏԻ Բարձրապարի Տ. Տաճատ վարդապետի Մեղրոնեան, հարազատի Մայր Աթոռոյս և յաւէտ Սիրեցեւոյ մերում ողջոյն և հայրապետական օրհնութիւն:

Հայք ըստ բերմանց ժամանակի տարադրեալ ի բնաշխարհէս հաւատաւեցան ուրեք, ուրեք տեղիս Եւրոպիոյ, յանտես աշաց մերոց և հեռի ի մենջ. առ այս վտարանդեալ վիճակ հօտիս թէ և ցաւ մեծ պատճառէ հայրապետական սրտի մերում, սակայն և միխթարեալ կամք, երբ վաստակաւոր ժողովուրդ հայոց տուկուն և հեռաւան բնաւորութեամբ իւրով ասպնջական լինի յիշխանաց և ի պետութեանց յորս հաստատեցաւ նա:

Առ ի ունել առաջի աշաց զծիշդ տեղեկագիր իւրաքանչիւր գաղութից Եւրոպիոյ առ յանդրագոյն անօրինութիւն մեր, այսու հայրապետական կոնդակաւ մերով պատուէր հրամանի տամք Սիրելոյդ մերում ելանել առ վտարանդեալ ցիրուցան եղեալ հօտս մեր անձամբ անձին հասու լինել առ տեղեւան, վկարեաց իւրաքանչիւրոց գաղութից, միխթարել զնոսա յանուն նորոյս Սիւնի և յորդոր կարգալ ի Մենջ կեալ և մնալ յաւէտ ընդ հովանեաւ մօրս Լուսոյ Սրբոյ Էջմիածնի:

Յոյս մեր հաստատուն է և հաւատամք, եթէ սիրեցեալ ի մենջ զաւակունդք սիրով ունկն դիցեն բանից քոց, զոր խօսեսցիս յանուն մեր իւրեւ ծայրագոյն գլխոյ փոքու հօտիս:

Արդ հայրապետական պատուէր մեր է, ելանել նախ ի Պուկարիա և առնել անդ զառաջնորդական ընտրութիւն ի ձեռն պատուիրակաց համայն գաղութի այնորիկ ըստ եկեղեցական սահմանադրութեան մերում, զոր տուաք Ռուսահայոց, ի նկատի առեալ միայն զտեղական պայմանսն, եւ ապա մեկնեալ անտի գնալ ի Ռումանիա, ի Մարսէյ, ի Պարիզ եւ այլ հայ գաղութս մեր և ապա դադար առնուլ անդ ի Պարիզ և մնալ անդրագոյն տնօրինութեան մերում:

Մաղթենք ի Տեառնէ լինել քեզ զօրավիզ և հայցեմք ի նըմանէ առնել քեզ ճանապարհորդակից զհրեշտակն Տօբիթի առ անսայթաք գնացս քո ի տար աշխարհի:

Շնորհ Աստուածային լիցի ի վերայ քո այժմ և յաւէտ. Ամէն:

Մ. Կ. Ա. ՀԱՅՈՑ

Ի 30 օգոստ. 1906 ամի

և ըստ Տոմարիս ՌԵՄԶ.

Ի Հայրապետութիւն մերում ԺԳ. ամի

Արարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

ի Վաղարշապատ

թ. 979

ՔԻՉ ՍԸ ԼՐՁՈՒԹԻՒՆ

Հայերս արդէն տիրացու ժողովուրդ մըն ենք ընդհանրապէս. իսկ մեր հանրային գործիչները փոխանակ զմեզ դէպի դրականութեան առաջնորդելու շատ անգամ աւելի փանթեղի, աւելի երեւակայական ու մտացածին քայլերու ու խորհուրդներու կառաջնորդեն:

Անցեալ դարու մեր ազգային գործիչները քիչ բացառութեամբ միայն Հայաստան երգելով և լալալ Հայաստան պոռաւով ժամանակ անցուցած են, այդ Հայաստանը ստանալու համար առանց ուժեղ ու կռուող բազմաթիւ պատրաստութեան վրայ մտածելու, այնպէս որ ժողովուրդը այն կարծիքը ունեցած է թէ Հայաստան հառաչելով ու երգելով պիտի կրնանք որ մը զայն ազատեն:

Այսօր ալ մեր յեղափոխական պետերն շատեր նոյնպէս փանթեղի, երեւակայական և անգործնական մտքերու կ'ընտելացնեն ժողովուրդը. ընկերական կարծիքներու համար՝ որոնք տակաւին էն քաղաքակիրթ ազգերու մէջ լուծում չէին ստացած, ազգը կը պառակտեն. ինչպէս ընկերվարական հարցը աննշան գործ մը ահագին լալթանակ մը կը հռչակեն. օրինակ՝ «Երիտասարդ Հայաստան» թերթի վերջին թիւին ճակատը երեցող Հնչակեան յաղթանակ խոշոր վերտառութեամբ դրուած այն լուրը թէ Շանթի դիմումին վրայ Պարսկաստանի նոր Սատրապմը իր նախորդի դրած արգելքը վերջուցել է հայ յեղափոխութեան մոտքի մասին: Դրական մարդիկ ամօթ պիտի զգան անշուշտ այս տեսակ լուրի մը վրայ Հնչակեան ՅԱՂԹԱՆԱԿ խոշոր վերտառութիւնը տեսնելով: Նոյնպէս այդ թերթի տպարանէն նոր ստացուած «ԿԵՅՑԷ ԲԱԶ ՄՈՒՐԱՏ, ՄՈՒՐԱՏ ՄԵՐԸ» և այլն բացազանցութիւններով լեցուն պատկերը, որ ոչ թէ այդ պար-

կեշտ հայրենասէրին փառաբանութեան մը այլ անոր համեստութեան վերաւորանք մը ըլլալէ զատ, միամիտ ժողովուրդը անուններով շլացնելու և լրջախոհ դասակարգին յեղափոխականութիւններէն պաշտպանելու միայն կը ծառայէ. ինչպէս որ այդ պատկերը դիտող չէզք բարեկամ մը կըսէր. «Այս մարդիկը եթէ իրենց հետեւող մաս մը ժողովուրդը անմիտ ոչխարներու տեղ դրեր են, գոնէ թող ամբշնան ուրիշներէ այս տեսակ խենդութիւններ հրապարակ նետելու մէջ»: «Հնչակեան յաղթանակ. Մեծն Մուրատ»(1), իբրեւ թէ վանայ բերքը գրաւուած ըլլար. իբր թէ Արտաշէս Աշխարհակալի կամ Մեծն Ալեքսանտրի պատկերը դիմացնիս ունենայինք:

Ասոնք շարլաթանութիւններ են, ասոնք ապուշութիւններ են, որոնք պէտք չէ ալլես գործունի: Մեր ազգային վիճակի ներկայ ծանրութիւնը լուրջ քայլերու, լուրջ և անկեղծ առաջնորդներ կուզէ:

Քիչ մը լրջութիւն:

ԱՐԴՈՍ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Կաթողիկոսի դիւանը Տփղիսի թեմի առաջնորդին հետեւեալ հեռագիրը տուեր է:

«Նորին Վեհափառութիւնը հրամայում է ծանուցանել հրահանգով ամբողջ թիւում, որ կըրօնը պարտադիր ճանաչվի ցնոր կարգադրութիւն, և այդ մասին հաղորդել ուսուցչական համագումարի նախագահ Իսահակ Յարութիւնեանին»:

Դիւանապետ Ներսէս վրդպ.

— Սեպտ. 11ի իրիկունը ժամը 9ին ոստիկանութիւնը հրացանաձրգութեան ենթարկեց Պապուկի «Պէռլին» և «Սեվաստաբօլ» պանդոկներու ճաշարանները, ուր քանի մը անիշխանականները ստամ էին: Խառնաշփոթութեան միջոցին այդ կասկածելիները կրցեր էին փախչիլ Ուրիշ տեղե-



կուխեան մը նայելով, սուսնի մը մէկ սենեակին մէջ, իբրեւ թէ 10 անիշխանականներ ժողով կընեն եղեր, ոտակաւորութիւնը իմանալով տունը շրջապատեր է. անոնք սկսեցին հետեւանականներ պարպել զինուորներուն վրայ և սենեակին լոյսը մարելով, ետեւի կողմէն փախեր են վեց մարդ սպաննուեր է ուսնց 2ը զինուոր և մէկ քանի հոգի վիրաւորուեր: Նոյն գիշերը շատ ձերբակալութիւններ եղած են:

— Շուշիէ նոր խօսք թերթին կիմացներն թէ հայոց թաղէն շատ մը երիտասարդներ ցերեակալուած են: Թօքթիւնէ հրապարակէն խուժը մը 30ի չափ հայեր զօրքերէն շրջապատուած ու բանտ առաջնորդուած են, և զեռ կը շարունակուին ձերբակալութիւնք պատճառը չը գիտցուիր, քաղաքացիք սարսափի մէջ են:

— Գանձակի նահանգապետը Կաւառապետին և ոստիկանապետին շրջաբերական մը զրկած է սա բռնադատութեամբ: Բարձրագոյն հրամանով զինուորական դատարաններ հաստատուած են, ծանուցէք ժողովրդին թէ ծանր յանցանքներու համար՝ նախնական քննութիւնէ յետոյ, որ առ առաւել 2 օր կը տեւէ, յանցանքները առանց վերաքննութեան դիմելու իրաւունքի անյայաղ կ'ենթարկուին խիստ պատիժներու, նոյնիսկ մահուան պատժի:

— Պաշտօնի, Շուշիի, Գանձակի և զեռ ուրիշ քաղաքներու մէջ թէ հայ և թէ օտարազգի բնակիչները չուզելով բնաւ թուրքերու թաղերուն մէջ բնակիլ հաւաքուած են հայոց թաղերը: Երկուսն որ թուրքերը իրենց կալուածները արժէքէ ինկած ու պարագ մնացած տեսնելով, խիստ տոգոհ են հայ-թուրքական ընդհարումներու այս հետեւանքէն: Այս երեւոյթն ալ ապացոյց մըն է թէ թուրքերը վստահանալի տարր մը չեն օտարազգիներու համար ալ:

Ա. ԵՐԵՎԱՆԵԱՆ

16

ԻՍԶԱԿԱՊԵՏԸ

ՄԱՍԸ ԱՌԱՋԻՆ

ՃԱՋՎԱՐ-ՓԵՆ

(Շար. նախորդ թիւէն)

Ալեւոր քուրտը կարգաց ալդ գրութիւնը ծարյէ 'մ ծայր ու յետոյ րացողանջից:

— Անշուշտ, հասկցա՞ք թէ պատուանշանը կը տրուի ձեզ ծառայութեան մը փոխարէն, այդպէս չէ:

— Ի հա՛րկէ. եթէ ո'չ Սուլթան ու՛ր ձահվար պէկ ու՛ր... որուն հոգն է ինկեր ատանկ պատուանշանի մ'արժանի ընել զիս: Ասիկա կը նշանակէ ո՞՞

ՅՈՅՆ ՎԱՐՓԱՐԱՆՆԵՐ

— \* —

Բաթուկէց (տոհմաւէրք) անուն պուլկարական նոր կազմակերպութեան միջիններով ըրած պահանջին համաձայն, կրթական նախարար Շիմանով տեղեկագիր մը ներկայացուց նախարարաց խորհուրդին, որ խնդիրը քննելով որոշեց՝ 1907 յունվար 1էն սկսեալ Յունաց վարժարանները ենթարկել կրթական օրէնքին 10րդ. յօդուածին տրամադրութեան:

Այդ յօդուածը այսպէս կըսէ  
«Պուլկարահայտակ ամեն քրիստոնեաներու զաւակներ իրենց նախնական կրթութիւնը պուլկար լեզուաւ կը ստանան»:

Այս օրէնքը շուրջ 15 տարի առաջ հանգուցեալ Սթանպուլովի նախարարապետութեան օրով կրթական նախարար Ժիվլովիչի դժուած եւ Սուլթանիէն վաւերացուած էր. բայց դրժադրութեան գալով, օրէնքին այդ յօդուածը մէկ կողմ թողուածէր, որովհետեւ այն ատեն Յոյները բողոքող հանդիսացան եւ այդ ժամանակին քաղաքական փափկութիւնները չէին թոյլ տուեր պուլկար կառավարութեան՝ զլիսաւորապէս Արեւելոյն Ռումելիի մէջ ուր կը գննուի յոյներու մեծամասնութիւնը՝ նոր յանգուցութիւններ փոքրիկ քանի որ այդ նահանգին Պուլկարից կցուելը պետութիւնները տակաւին պաշտօնապէս չէին ճանչցած եւ թուրքերն ու Ռուսիան բողոքող էին միշտ, հետեւեալպէս այն ատեն խնդիրը կ'ընայ մեծ բարդութիւններ ստանալ: Այս նկատուածով Սթանպուլով 10րդ. յօդուածին գործադրութիւնը տնորոշ ժամանակի մը համար յետաձգել տուաւ, ինչ որ Ժիվլովիչ հրաժարման պատճառ եղաւ:

Իսկ այսօր քաղաքական այդ փափակ պարագան գրեթէ գոյուցութիւն չունի, Ռուսիան եւ ուրիշ պետութիւններ ընդունած են հարաւային եւ հիւսիսային Պուլկարից միացումը: Սուլթանն ալ ընդունած է տեսակետով մը այդ եւ հաստատած իշխան Ֆէրիտիատի իշխանութիւնը նախկին Արեւելեան Ռումելիի վրայ: Այժմ Պուլկարները հոն ինքզինքնին իրենց տանը մէջ կը նկատեն եւ կրթական օրէնքի խտուրթիւնները կուզեն յարգել տալ Յոյներուն ալ:

Օրէնքի այդ յօդուածին տրամադրութիւնը ոչ-պուլկար ազգերու համար անարդար իսկ եղած ըլլայ, յոյն ազ-

գին համար փոքրիկ փոխարինութիւն մըն է պուլկարներուն կողմէ, որոնք 7-8 դարերէ իվեր Յոյներէն բարբարիկ հալածանքներ կրած ըլլալէ զատ այսօր ալ Մակեդոնիոյ մէջ կրելու վրայ են:

Տասներորդ յօդուածին տրամադրութեան համաձայն վարուելու մասին կրթական նախարարութիւնէն Յոյներու եկած պաշտօնական զեկուցման պատասխանելու համար անոնց առաջին խօսքը եղեր է «Ի՞նչու համար Հայոց վարժարաններն ալ նոյն խտուրթիւններու չեն ենթարկուիր» ըսելէ Դիմիտրի է հոս թէ յունական նախաձեռն, յունական շարութիւնը անգամ մըն ալ կը յայտնուի. բայց պատասխանը շատ պարզ եւ շատ գիւրին է՝ պուլկարները Հայերէ ո'ւեւ չլսած չեն տեսներ եւ ոչ մէկ ժամանակ. այլ բարեկամութիւն եւ արտագին համակրութիւն. մինչ յոյներէն միշտ թշնամութիւն չարակամութիւն եւ հալածանք որոնց աննշան մէկ տոկոսն է որ այսօր Պուլկարները կը հառուցանեն անոնց:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կրէտէ-Գանտիա 13 սեպտ 1906

Ձառկի առթիւ պատրիարքական հրամանով զրկուած և այժմ քաղաքս դռնուող առժամեայ հոգեւոր հայիւ տխրահաշակ Գէորգ Հիւրմուզեան քահանայն ընտրութեան ժողովուրդը իրմէ զգուցեցած ըլլալով, հիմակ ալ կառավարութեան դիմած է որ եկեղեցիին կալուածները յափշտակէ ինք անձամբ, նա չուզեր բնաւ թաղական խորհուրդ կազմել ալ կը ջանայ որ ինքը տէր ըլլայ:

Տեղւոյ ժողովուրդին մեծամասնութիւնը հարկադրուեցաւ ամեն միջոց ձեռք առնել թէ հանգէպ կառավարութեան և թէ պատրիարքարանի այդ քահանային նկատմամբ. որ վերջապէս կառավարութեան դռնէն վաւերուեցաւ, «մենք արդէն անցեալ տարուէն գիտէինք քու ինչ վարնոց մարդ ըլլալդ» ըսելով նոյնպէս յոյն մէթորօյի տէն քանի քանի անգամներ վռնուած է:

Ժը չը խնայել ժողովուրդի մը, որ մեր աշխատաւոր գաղակարգն է եւ որուն ճակտին քրտինքով կ'ապրինք: Վալին թո՛ղ իր բարեկամը նկատէ ձեզ դուք ներքնապէս անոր թշնամին կարող էք ըլլալ: Կառավարութիւնը թո՛ղ յուսայ որ մարդիկները արեան ճապարհներու մէջ գիւղերը կը փոխեն, դուք գաղտնի կերպով պաշտպանեցէ՛ք լեռներու խորը ապաստանած փախուսականները... և որովհետեւ թրքէշանի բոլոր սահմանները ձեզի կը պատկանին, կառավարութիւնը չի պիտի դրկէ իր զօրքերը... Ճշմարիտ չէ՞ այս նկատողութիւնս:

- Ճշմարիտ է:
- Ուրե՛մն:
- Պիտի ընդունիմ:
- Կը մնայ մտածել թէ՛ ի՞նչ կերպով աշխատելու է երկրին խողովութիւնը վերջացնելու... Թէ ի՞նչ կերպով այս թշուառ ժողովուրդը պաշտպանելու է թափուած արիւնը չը մնար

Այդ քահանային ասկէ հեռունալուն համար քանի անգամ է որ Պատրիարքարան կը բողոքենք բայց մեր արդար և իրաւացի բողոքները անլսելի կը մնան: Տեսնենք այս վերջին անգամի՞ն: Պատրիարք հայրը ինչ որոշում պիտի տայ. եթէ մեզ չը դոհացնէ, պիտի ստիպուինք դիմել սեւ միջոցին. — որ «ոչ լուիցէ ունկամ» լուիցէ թիկամբը:

Գաղթական մը

ՍՈՊԶԱՊԱՆԱԿԱՆ

Թ Ա Ր Մ Օ Թ

ԵՆԶՈՂԱԿԱՆ ՄԱՐԶԱՆԻ

(Շար. և վերջ)

Եթէ կարելի է ձեռք բեր այնպիսի նշանակեալ մը որ արեւուն ճառագայթները կը մտնեն որումն մէկ պահուն:

Ուսման, գործի կամ նստելու մի գործածել նշանակեալը եթէ կարելի է, Բայց եթէ պարագայից բերմամբ քաղաքս նոյն սենեակը գործածել թէ՛ գործելու եւ թէ՛ քննադատ համար, հոգ տար որ ամեն գիշեր պառկելէ առաջ օղբ փոխուի կառարկեալս:

Թիշէ թէ սենեակիդ վառ կանխեղը աւելի թթուածին կ'սպառէ քան մի քանի անձինք, հետեւաբար իրիկուր մեծագոյն քանակութեամբ օդ հարկ է ներս ընդունիլ:

Թարմ օդի կենսական կտրուորութեանը վրայ այսքան մը չնշտելէ յետոյ, աւելորդ չլիար ըլլայ անոր չափազանց գործածութեանը վնասն վերայ ալ սեւագրութիւն դարձնել: Օդի չափազանց քանակութեամբ ներշնչումը, ամենէն թարմ ու մաքուր օդն իսկ ըլլայ ան, ոչ միայն անողորմ է, այլ իր յայտնի վնասն իսկ ունի: Թաքային տկարութիւն ունեցող եւ կամ թոքախտի նշաններ ցոյց տուող որեւէ անձի համար քաղաքական պէտքերով չէ ոչ միայն թարմ օդ ներշնչել, այլ յաւաքական երկար ու խորունկ շնչողութիւններով թոքերը կարելի եղածին չափ լեցնել թարմ օդով: Սխալ է, սակայն, կարծիք թէ շնչողական մար-

հողին մէջ... ո՞՞րք, չարագործութիւնը ու զրկանքը չ'են ծածկուելու: Աստուած կը տեսնէ այս անիրաւութիւնը... պատիւը թէեւ ուշ կը հասնի, բայց վճռական ու վրէժխնդիր է. Գիտեմ... թալանի չարագործութիւնը մեղմելու համար թէ՛ վալի փաշան եւ կառավարութիւնը դէյ ալդով կը նայի վրաս... մինչդեռ փոյթ չ'եմ ընել, որովհետեւ անողորմ բան էր խիւ ծառայի հացը, զրկել զինքը կտոր մը քուրջէ, որուն տակ կը հանգչեցնէր իր խոնջած գլուխը եւ հանել անոր վրայէն շապիքն ալ... Մարդիկ, որ չափ որ անխիղճ ըլլան, դարձեալ չի պիտի կրնան անասունի պէս աշխատու ժողովուրդի մը հետ ատանկ անիրաւութեամբ վարուել:

Ճահվար պէկ ու Մանուկ աղա երկար ատեն խոսեցան ու վճռապէս որոշեցին գտնէ իրենց սահմանակից եղող հայաքանակ գեղերը պաշտպանել: Այս վճռական որոշումներէն ետքը,



զանքներով միայն կարելի է բարձր  
մարդ. մի սեղանի վրա մի անգամ

Թեքերուն պաշտօնը ծանօթ է ամե-  
նուա: Կրնանք ասել, որ մի անգամ  
մարդկային թեքեր, ուր կը լեցուին  
նորոգում օգի հասանքները. եւ ուր-  
ի՞նչ իրենց թեքումին պաշտօններով  
կը բաշխուին մարմնոյ զանազան մա-  
սերուն: Միւս կողմէն ալ, սակայն,  
թեքերուն մէջ կը հաւաքուին կարեւոր  
մէկ մասը մարմնական գործերն  
գործնէութենէ արտադրող անհայտն  
թեքերն. ուրիշ արտաշնչական միջոցաւ  
կ'արտաքուսէր մարմնէն: Արտաշնչական  
քանակը, այսպէս, կ'ախտէր ունի միջո-  
ներքին շնչողութեան կամ ուրիշ բա-  
ռով՝ րնդմանուր դրութեան մկաններ-  
ուն եւ հիւսուածներուն մէջ տեղի ու-  
նեցող քիմիական գործնէութեանց չա-  
փէն: Այսին մարդ գ'տէ թէ աւելի ա-  
րագ եւ աւելի ուժգին կը շնչէ երբ  
վազէ, թիւփալէ, լողայ եւ կամ մկա-  
նական որեւէ մեծ ջանք ընէ: Մարմնոյ  
պահանջներուն համեմատ եղանակաւ  
արուող գործողութիւն մըն է շնչողու-  
թիւնը: Արեւնը անհայտն թեքումով կը  
ծանրաբեռնի եւ մեծ գոյն մը կ'ստանայ  
երբ կը գործէ մարմնը. հետեւաբար կը  
ստանալանայ նաեւ շնչողութիւնը՝ որ-  
պէս զի փութով արտաքուսէր մկանական  
ուժգին գործողութիւնն արտադրող  
անհայտն թեքուն եւ անոր տեղի ներս  
ստնուի մաքուր օդի թթուածինը: Բայց  
երբ բաղդատարար անգործ վիճակի մը  
մէջ կը գտնուի մկանական գործիւնը  
եւ թթուածին չսպառիր անհատի, օդի  
պահանջը կը նուազի ու շնչողութիւնն  
ալ կը անարանայ համեմատաբար:

Մարմնոյ պահանջէն աւելի օդ երբ  
ներշնչել փորձենք խոր շնչողութեան  
մարդանքներով, արեւնը պէտք եղածէն  
աւելի թթուածնով կը լեցուի ու ժա-  
մանակաւորապէս կ'արգիլուի շնչողու-  
թիւնը: Ասիկա կը ցուցնէ թէ քնութիւ-  
նը անտեղ քողոքի չմտար երբ որեւէ  
կերպով միջամտել փորձենք իր պաշ-  
տօնին: Անսովոր չէ մի քանի խոր  
ներշնչումներէ յետոյ նուազկոտ զգալ  
Տախտակամածին վրայ նուազկոտ ին-  
կաւ երթաւարք մը, որ բաց պատու-  
հանի մը առջեւ նստած շարունակեց  
խոր ներշնչումներ ընել հարատեւօրէն:  
Շնչողական մարդանքներով սոսկ մար-  
մնոյ ընդհանուր գործիւնը զարգացը-  
նելու փորձին անօգուտ քայլը կը  
տեսնուի երբ նկատի առնենք թէ՛ որ-  
չափ քիչ կը գործնայ սրտին գործնէ-  
ութիւնը այսպիսի մարդանայ միջոցաւ:  
Սրտի բառախուսները մեծապէս կ'ա-  
ծին երբ մկանական որեւէ գործ կա-

տարենք, ինչպէս արագօրէն քաշենք,  
վազենք կամ լողանք: Շնչողութիւնը  
ալ մեծապէս կ'արագանայ մկանական  
ուժգին գործողութեանց ազդեցութեամբ  
նկատ սաստիկ ու երկարատեւ մարդա-  
նայ տան երբեմն վայրկեանը մինչեւ  
160 անգամ կը բարախէ սրտը, ընա-  
կանին թիւնը քայլով իւր 75 կամ 80:  
Սրտի գործողութեան այս աճումն  
նպատակն է ար օդին մաքուր արեւն  
քաշել թեքերէն ու մարմնոյ հիւս-  
ուածներուն խրկել զայն, որ անոր  
թթուածինը կը գործածուի արագօրէն:  
Նոյն ատեն հիւսուածներէն թեքերուն  
վերադառնել անհայտն թեքումով եւ  
մարմնոյ թունաւոր արտադրութիւն-  
ներով ապահանգած արեւնը: Առանց  
սրտի այս կրկնակ պաշտօններուն կա-  
տարմանը՝ ո՛ր մեր մկանները կրնան  
իրենց գործին շարունակել եւ ոչ ալ  
շնչողութիւն կրնայ տեղի ունենալ:  
Սրտի արագ բարախումնէն կ'ախտէր ունի  
ուրեմի, թէ՛ արտաշնչական թէ՛ ներշնչ-  
ման գործողութեանց կատարումը: Բը-  
նախասական այս անհերեւ ճշմարտու-  
թիւնը ըմբռնելէ յետոյ գիտար չպիտի  
ըլլայ այլեւս տեսնել թէ ինչո՞ւ չըն-  
չողական մարդանքեր լոկ բացարձա-  
կապէս անօգուտ են, որչափ ատեն որ  
չեն ընկերակցիր մկանական մարդա-  
նայ:

Երբ չարք մը խորունկ շնչողութիւն-  
ներ կ'ունենայ մէկը, արեւնը իւր թէ  
կը քաւալի ուղեղէն սրտին ու թոքե-  
րուն մէջ, Բայց ասով չաճիր սրտին  
գործնէութիւնը որ արագօրէն դէպի  
ուղեղը վերադարձնէ իր մէջ կուտակ-  
ուող արեւնը, եւ հետեւաբար նուազ-  
կուտութեան զգացումը կը յաջորդէ այս  
տեսակ մարդանայ: Բայց երբ խորունկ  
շնչողութեան հետ ունենանք նաեւ մը-  
կանական մարդանք մը որ սրտին ինչ-  
պէս եւ թեքերուն գործնէութիւններն  
արագցնէ, այդ պարագային թէ՛ սրտը  
եւ թէ թեքերը պիտի ուժովանան: Արագ  
քայլի, րոտի մազցիլի, թիւփալի, վա-  
զել, սանիլ, լողալ եւ այլն՝ սթանդըի  
մարդանքներ են այս մասին: Պարզա-  
պէս յիշարութիւն է՝ աւելի քանակաւ  
թեքումը թթուածին լոկ ներշնչելով կամ  
լոկ խորունկ շնչողութեան մարդանք-  
ներով մարմնը կենսանորոգելու աշ-  
խատիլ, որովհետեւ արեւնը չկրնար  
ծծել ներս բերուած այդ յաւելուածա-  
կան թթուածինը եւ ոչ ալ մարմնը  
պէտք ունի անոր: Կիւսքի էական  
պայմանն է թթուածինը, եւ թարմ ու  
մաքուր օդի կարեւորութեանը վրայ  
որչափ չնշտուի շատ չէ: Սակայն մոռ-

նալու չենք թէ անօգուտ եւ անգործա-  
ծելի մնալու դատապարտուած է խոր  
շնչողութեանց միջոցաւ ներս առնու-  
ած թարմ ու մաքուր օդը, եթէ շնչո-  
ղական մարդանքներու հետ չենք կա-  
տարեր նաեւ մկանական մարդանքներ:

Լոյս

## ՁԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Էլ միտնէ հոս հասան Գշ. օր  
Տէր Տաճատ և Տէր Մաշտոց վար-  
դապետները: Վերջինը միայն օր  
մը մնալով անցաւ դէպի Ռուս-  
չուք շարունակելու իր ճամբոր-  
դութիւնը մինչև Ամերիկա, ուր-  
ի՞նչ Գեր. Յովսէփ եպ. զինք հրա-  
ւիրեր է ժողովուրդի մէկ մասին  
փափաքին համաձայն: Իսկ Տէր  
Տաճատ վարդապետ կը հիւրասիր-  
ուի հոս մինչև որ իր պաշտօնը ա-  
ւարտէ, որ է պատգամաւորական  
ժողով կազմել և առաջնորդական  
ընտրութիւն կատարել տալ:

— Տեղւոյս ազգ, վարժարանի  
Հոգաբարձութեան ընտրութիւնը  
կատարուած է: Բայց երկու ան-  
դամոց ընտրութեան դէմ ընդդ. ք-  
ուած է, այնպէս որ ապահով կը  
թուի այդ երկու անձերու ընտ-  
րութեան բեկանումը:

— Սիւլէնէն տէր Վաղինակ  
քահանայ հրապարակաւ իր հրա-  
ժարականը կուտայ վեց տարիի  
չափ այդ քաղաքին մէջ քահանա-  
յագործելէ յետոյ, զոր ինք ա-  
պաշխարհանքի շրջան մը կը հա-  
մարէ, և վայելքի քաղաք մը կը  
փնտռէ պաշտօնավարելու հա-  
մար:

— Տեղւոյս Որբախնամի հաշիւ-  
ները պահանջող բաց նամակ մը  
ստացած ենք Տ. Յ. Ճանկիւլեանի  
ուղղուած, որ գլխաւոր պատասխա-  
նատուն կը ճանչցուի Որբախնամի  
գործերուն և հաշիւներուն մէջ:



Ճանվար պէկ հեծաւ նմոյքը, սեղմեց  
իր բարեկամին ձեռքն ու դէպի քա-  
ղաքն ուղղուեցաւ:

Բարձր էր իր հասակը. ոսկրուտ  
ու յաղթանակաւ կազմուած մ'ունէր  
եւ կերպարանքին ամբողջ արտայայ-  
տութեանը վրայ մոգական գրաւիչ  
ցոլք մը կը պլպլար: Տարբեր չէր՝  
հազիւ քառասունի մօտ կերեւորաւ  
Լայն ու վիճ ճակատը խորշովի մը  
հետքը ցոյց չէր տար: Սեւ ու խիտ  
մօրուք մ'ունէր, որ այտերու հաւկը-  
թածիւ ցցուածքը կէս մը կը ծածկէր  
եւ՝ պիտիբուէ հետ խառնուելով, վա-  
յելուք ձեւ մը կը ներդաշնակէր:

Հարած էր ձիւնի սպիտակութեամբ,  
լայն քաջակերպ, նայնուհի հիւսուած-  
քով քիթիկի շալվար մը, մետաքսա-  
յի գործուածքով, ոսկի կոճակներով  
ու կանաչ գոյնով իշխիկ մը՝ որուն  
բացուածքէն կեն մը կերեւորաւ նայ-  
նուած չապիկը եւ թանկագին գա-  
զախիկ մը, որուն վրայ ցան ու ցիր կը

կախուէին թիթիկի գլուղ հիւսկէն-  
ներ: Այդ թիւնի վրայ նստած էր ջուռ  
հապան, որ կերկնար մինչև ձիւն  
սրմա սիւսուածքով թաքը եւ կիսո-  
վին կը ծածկէր վեց հարուստիանի  
պատեանը: Գլուխը ձեւով, բարձրա-  
դիր ու գեղեցիկ քօլօք մը կար, որուն  
չուրջը փաթկուած էին կարմիր ասա-  
լիկ մը ու սեւ մետաքսէն փռիլ մը՝  
գոյգոյն ու լուսնափայլ Ոտքերու կօ-  
շիկները փայլուն ու արեւաթոյն ե-  
րեւոյթ մ'ունէին:

Նոյնը քանի մը ժամուան մէջ  
կտրեց անագին հեռաւորութիւնը՝ ու՝  
կէս օրէն ետքը, Վալի փաշայի ապա-  
րանքին դուռը կանգ առաւ:

Ետքը պէկ աճապարանքով մը դի-  
մաւորեց այս մեծանուն հիւրն ու դա-  
լին առաջնորդեց ուր կ'ապասէր Վալի  
փաշա:

Ճանվար պէկ կեղծ յարգանքով մը  
բարեւեց ու նստեցաւ բազմոցին վը-  
րայ: Անմիջապէս օշարակ մը եւ ետ-

ւէն ոսկեծոյլ զարդերով նարկիլէ մը  
հրաժայեցաւ իրեն:

— Չափազանց ուրախ եղայ ձեզ  
տեսնելու, ըսաւ Վալին՝ խորամանկ  
նայուածք մը նետելով քաղցին վրայ:

— Շնորհակալ եմ միմիջեց ձանվար  
պէկ:

— Վաղուց էր որ կը փափաքէի  
ձեզ հետ տեսակցութիւն մ'ընելու՝ վը-  
րայ բերաւ Վալի փաշան՝ որ տարիքն  
առած, միջահասակ, ծանր նայուած-  
քով, մաշկ կերպարանքով, գերուկ  
կազմուածքով արծուի քիթ ու տփուկ  
անձ մընէր: Այսօր որ առիթը կը ներ-  
կայանայ ու գուք կ'արժանանաք վե-  
հափառ Սուլթանի բարձր շնորհքին,  
պիտի յայտնեմ մեր տեսակցութեան  
նպատակը, գիտնալով որ հաւատքի մը  
հոգեկան կապը կայ մէջերնս:

Ճանվար պէկ չէր ընդմիջեր. այլ  
խորաթափանց հայեացքով մը կը դի-  
տէր իր դէմը գտնուող պետական  
անձնաւորութիւնն ու անոր ամեն բա-

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱԽԷՐ

Պուլկարիոյ հայ պաղտիթ արժանա-  
նաւոր եկեղեցական Առաջնորդով մը  
օժտելու նպատակաւ թուականէս իւր  
ուրիշ ամիս առաջ ժողովրդեան փա-  
փաքին համաձայն օտարուած միթին-  
կին որոշմամբ, եւ թաղական խոր-  
հորդոյս քոյր թաղականութեանց նա-  
խարք ստացած համաձայնութեամբ,  
անդեալ մարտ 4 թուակի առ Ն. Ս.  
Օժովին Վեհափառին եղած դիմու-  
մին ի պատասխան, Սրբազնագոյն Հայ-  
րապետն բարեհաճած է նկատողու-  
թեան առնելով խնդիրն իր կողմանէ  
յատուկ կոնդակաւ նուիրակ զրկած է  
բարձրաշնորհ Տէր Տաճատ վ. Միլքոն.  
հանը Պուլկարիոյ Ազգ. եկեղեցական  
պատգամաւորական ժողով գումարն-  
լով Առաջնորդական ընտրութիւն կա-  
տարելու:

Ուստի կը հրաւիրեմք արգոյ հայ  
հասարակութիւնը վաղը առաւօտեան  
Ս. Պատարագին ներկայ գտնուիլ  
յ'ունկեղրութիւն վեհ. Հայրապետին  
Սրբատառ կոնդակին, եւ կէ՞ օրէն յե-  
տոյ, ի ժամ 2, յ'Ազգ. վարժարանն առ  
ի խորհրդակցութիւն վերոյիշեալ կա-  
րեւոր խնդրոյն:

Թաղ. Սրբազնագոյն Ս. Սարգիս եկեղ.  
Վառնա 23 սեպտ. (ԿՆԻՔ)

## ԹԻԻՐԻԿ ԿԱԶԷԹԱԼԱՐԸ

Ազտեմէն «Թուն» զազէթասը-  
նա խիթապէն պիտի մեղալէի ա-  
ճիգանէմիդէ 61-62 նումբերալը  
զազէթայի միւթէպէրինիզտէ  
տէրերնէ սայու թէնէղլիլ պու-  
յուլտըլընըլտան բէյտէրէյ զայ-  
րէթ ալարագ, մին զայրի հատ-  
տին, ումումիյիթէթէնսանիյիթէթ  
պապընտա ուֆագ պիտի խըտմէթ  
իւմէք էմէլիլէ, կէրէք տէօլ-  
լէթէ վէ կէրէք միլլէթէ իշլէ-  
նէն հաթայը թատաա իտէրէք,  
պունճա մալ ու ճանըն զայաթը-  
նը նասըլ մուճիպ օլուտուկուընը  
վէ Լվրօբանըն բօլիթիգասը ուղ-  
րունա պու իքի ալիճէհապ միլ-  
լէթէթիլ պիտի պիլլէրինէ թա-  
հա պիտի նէլլէյտէկ տիւլման  
կէօղիլ իլէ պագարագ շու ու-

րը, ամեն մէկ խօսքը, ամեն մէկ նա-  
խադասութիւնը նկատի կ'առնէր: Ճան-  
վար պէկ գիտէր թէ ի՞նչ կ'արժէին  
այդ շոգոքորդութիւնները, դիտել թէ  
ի՞նչ քանի համար էին այդ յարգանք-  
ներն եւ մանաւանդ գիտէր թէ պատ-  
ուանալը ի՞նչ նշանակութիւն ունէր:

— Հիմակ սիրելի ձանվար պէկ,  
յարեց վալին՝ իր խրոխտ ձայնը ջանա-  
լով մեղմացնել, հիմակ առիթ է օր  
յայտնեմ իրկրին գործիւնը: Հաւաս-  
տի աղբիւրներէ լուր առնուած է որ  
հայերը մտադրած են ապստամբիլ ու՝  
ահագին ուժեր հաւաքել, թէ՛ քուր-  
տիբու եւ թէ՛ կառավարութեան դէմ  
դնել: Իսիկա մտառանջութիւն կը  
պատճառէ ինծի... հետեւաբար ա-  
ռաջ քան ամեն ինչ պիտի աշխատիմ:

— Կարելի չէ՞, գոչեց ձանվար պէկ:

(Շարունակելի)



դուրսուղ թահագիրպաթը ուսմու-  
միյեյի օրթատան գալուրմագ  
իչին հէր զամիր վէ հէր սահի-  
պի վիճաւանտան պէ հագգին  
թէֆէքըրթալէպ իտէրիմ:

Շէօյլէ քի, էվվէլա անլաշը-  
մայան հիչպիր մէգալէ հիչ պիր  
մագսատը մէթուր օլամազ էլվի-  
րիր քի, կէլէն հալի քիւթահա-  
նէլէրէ քիչինին գալպի միւնա-  
տիմ օլմուշ իսէ, նուգթէ պէ  
նուգթէ պիր վէզնի իտրագէ  
ուրմագ իչին մա'իլէն վէ թէ-  
նէզզիլէն անը պէ թէգրար գը-  
րա'աթ պուլարմալը տըրլար,  
վէ օ' վագըթ քէնտի պապըրէթի  
խուսուսիյիլէրիննէ տէրք վէ  
քէշֆ իտէպիլիւրլէր օլտըկլարընը  
թափսիէ իտէրիզ:

Մուգաթտէմա մէթուպըմը,  
էօյլէ լուղաթ ըաթըրթըսը վէ  
վէզնու գաֆիյէ վէլվէլէսի օլմա-  
յուպ, իլլա բէգ վաղիհ սուրէթտէ  
ասըլ նիյաթը խալիսանէմիզ բէսմ  
վէ նագշ օլունմուշ իտի. հանի,  
իթթիֆագտան գուվվէթ, Համա-  
գաթտան մակուպիյիլէթ, իիթի-  
լալտան հարպ վէ էնճամը բէրի-  
շանիյեթ կէլէպիլիւր օլտուկընը  
թէֆհիմ իթմէկ իտէմիշ իտիգ:  
Ինգրազը անվալի տէֆու իզալէ  
իթմէկ իտէյէն քիմսէլէր վէ եա-  
խօտ միլէթ, տէօլլէթինին սուֆ-  
րասընտան չէքիսիւն անըն ա-  
շընտան եէմէսիւն եէթէր զայրու,  
զիրա հիչ պիր տէօլլէթ գըյա-  
մէթէ տէկին քիւմիլէն պիր  
միլլէթի պէսլէմէզ վէ պէսլէյէ-  
մէզ, «տէօլլէթին մալինի եէյէն  
տէնիզ եէմէյէն տօմուզ» իչթէ  
պու իթիգաթը պաթըլէ իլէ սօն  
սօնու պէօյլէ զա'աֆէթու թէ-  
տէնիյիլէթ իլէ օ' մէհու'ս շու-  
րիչի հալ տէյնէկինի ալուպ գա-  
նուտա պէքլէր, քի տահա սօն  
րատէ գօնշու տէօլլէթլէրին գու-  
լակլա'ը չըննասըն տէնիւր, տէ-  
մէկ իտէմիշ իտիկ:

Քէնտի ալամէթի զաթիյէսիլլէ  
միւքէլլէթ օլան պիր գաշ միլ-  
լէթտաշլարըմըզը զիրու եատ  
իլլէմիշ իտիկ, քի պու առէմլէր  
հիչ պիր վագըթ սէֆահէթ իւզրէ  
շուրատա պուրատա սէրսէրիեանէ  
եաշալուպտա խուսուսի մէնֆա-  
աթ իչին մէթուսէրկէրտան օլ-  
մուշ քիմսէլէրտէն օլմայուպ, իլ-  
լա մաղինին մուհէիսի արտ օլուն-  
մակա հասէր ճիհէթ իսթիհգագ-  
լարը պուլունտըլընը ալան վէ  
պէյան իթմէկտէն իպարէթ օլան  
միւրատը եէկանէմիզի, պազը  
մէրթէպէ զարա'աթմէալ քիմսէ-  
լէր հէր ան վէ հէր սուպհումէ-  
սատէ պիր թագըմ սի'այէթի  
նատէզա իլէ պաղըրա չըղըրա էն-  
ճամքար պիւթիւն իւլքէրայի...  
պիր հալի վէխիմէ իլգա իթտի-  
լէր վէ իթմէկտէտիլլէր, եաղըզ-  
լար օլըն... Թարիստէ կէչէն  
գանլը սախիֆէլէր իւզէրինէ միւ-  
նատիմ օլուպտա, պիրատէրանէ  
պիր սըագու խուլուս իլէ հէր իքի

միլլէթի պիրի պիրինէ եաղաշ-  
տըրաճագ եէրտէ եինէ պիր թա-  
գըմ եէնի եէնի աղվիյաթ վէ  
թապիրաթլէ «միւքէլլէր» վէ  
քիւֆրան նիյաթ պիր խըյանէթ  
էլգապըլա թալգիպ իտիլմէկտէ  
տիր: Ահ' էֆէնտիմ նասըլ սէօյ-  
լէյէյիմ պու թարզ մէթուպի  
էֆէնտիլէր պու ալէմտէ հէպ  
միլլէթի սաիլէյի պէօյլէ սէլամ-  
լայրլար, օհ, օհ. պիլմէմ նէ  
նէշագէթ նէ զամիր վէ նէ վիճ-  
տան. պու թապիրաթը վէ պու  
էլֆազի աճիյիպէյի օնլարա էօկ-  
րէթէն հօճալարըլա պէրապէր  
կինէ տայիմա սաղ օլընլար:

Միւքէլլիֆ էֆէնտի, պէօյլէ  
քիմսէլէր բուեա ալէմիւնտէ սա-  
յըզլայարակ «պիզ հալէա լաֆ  
սէօյլէյէլիմ, պիզ պիլտիլիմիզի  
պիր պաշքասընա պիլտիլմէք  
իտէյէլիմա տէրլէր իսէ վա'հ վա'հ  
պէօյլէ նատանիլէրէ (Սի-քիւթ  
արիֆին, ինտա ճահիլին, Լագլա-  
դը աճմակըն) էմրի մանթըզըն-  
ճա պիթթապի պիզտէ սիւքիւ-  
տի իլթիյար իտէճէյիլ տիր. իլ-  
լա ալէթ թէվալի հէր չէքիլէն  
միհնէլէրի ունուտապիլմէկլէ ա-  
սըլ միւպահասայէ տէվամ իտէ-  
լիմ էֆէնտիմ:

Պ. Կ.

### ՀԱՎԱՏԻՍԱԹ

#### ԹՈՒՐԻԻԱ

Բէտիֆլէրին սիւահ ալթընա  
ալնմալարընա տայիր շայէաթ  
Սթանպուլտան թէքլիպ օլընիյոր:  
Շիմտիյէ գատար եալընը Սքիւպ  
բէտիֆլէր սիւահա չաղըրմըշլար:  
Մանաստր, Բիրիւպ, Տրամա բէ-  
տիֆլէրի թօրլամագտան վազ  
կէչիլմիշ տիր:

— Վիէննատան իշար օլունտուզու  
իւզրէ, եէնի պիր բուժ չէթա-  
սընըն սինօրը կէչիլ օլմասըն-  
տան նաշի, Պապը Ալի պէօյիւկ  
տէվլէթլէրին Աթինա հիւքիւմէ-  
թիննէ թէչէպպիւտաթ իթմէլէ-  
րինի բէճա էյլէմիշ:

— Պուլկարիւնըն միլլի պան-  
գասը Սէլանիքտէ պիր չուպէ  
աշմագ իչին թիւրք հիւքիւմէ-  
թինտէն բուլսաթ իսթէտի:

— Սթանպուլտան էտիրնէյէ մու-  
հիմմաթը ասքէրիյէ կէօնտէրիլ-  
մէսի տէվամ իտէյոր:

— Ամիրիկա էլչիսի Սուլթանըն  
հուզըրընա գապուլ օլընմագ ի-  
չին եէնիտէն միւրաճաթ իթ-  
տի պիր գաշ կիւն տահա պէք-  
լէմէսի բէճա օլունտու Ամիրիկա  
տօնանմասը թիւրք սուլարընա  
եանաշիյոր:

Ապօնէլէրիմիզին պօրճլա-  
րընը կէօնտէրմէլէրի բէճա-  
օլունտուր: Քէօլէրտէ օլանլար Տօպ-  
րիչտէ Մ. Սիսակեանա վէ Սի-  
լիստրէտէ Մ. Արթաքի Սարգիս-  
եանա էօտէյէ պիլիլլէր:

### S U Ռ Ի Լ Ի Է

Շէհրիմզին բուժ մէթէպլէրի  
էվվէլքի կիւն էնսրէքթօր վասի-  
թասը իլէ գաբանալար: Բուժ-  
լարտան իքի զաթ պիզիմ թալ-  
իտրհրգարանընա կէլուպ, քէնտի  
մէթէպլէրինին գաբանալընը  
պիլտիլէրէք, «սիզէ տահա կէլ-  
մէտիլէր մի», գաբաթմատըլար  
մը'ս սիւվալլէրի իթմիլլէր տիր:  
էվվէթ պիզիմ մէթէպլէրի գա-  
բաթմալար: զիրա պիզ  
էրմէնիլէրիմիզ, Բուժլար կիպի  
ասրլարտան պէրու պուլկար  
միլլէթիննէ խըյանէթտէ վէ զա-  
տարլըգտա պուլընմամըզը, աք-  
սի օլարագ գաբտաշանէ վէ մու-  
հիպպանէ տալրանմըզը վէ տալ-  
րանաճաղը:

— Սուլթանըն մուհիպպի նէճիպ  
Մէհամէ բաշա էվրոբատան ալ-  
տէթինտէ Սօֆիայա ուղըրալուպ:  
Ֆէխ, բրէնս իլէ կէօրիւշմէք իս-  
թէտիլինի վիւքէլայա պիլտիլմիշ  
վէ օրատան ալտըզը մալիւմաթ  
իւզրէ, բրէնսին ասքէր մանէվ-  
րալարընա կիթտիլի էսնատէ եօ-  
լունը պէքլէյուպ թըրէնտէ ա-  
նընլէ ուզուննէ գօնուշմուշ, Պազը  
էվրագը հալատիսաթըն զանն ու  
պէյանընա նաղարէն, Պուլկարիա  
վէ թիւրքիա պէյնինտէ պիր ի-  
թիլաթը թամմէ (համաճայնու-  
թիւն) հուսուլա կէթիլմէք իչին  
Սուլթանըն արգուսընը Ֆէխ, Բը-  
րէնս Ֆէրտինանտա Ն. Մէհամէ  
արզ իթմիշ:

— Սօպրանիէ աշըլաճաղը էս-  
նատէ Սօսիալիստլէր ումուժի  
թէրքի իշղալ իտէրէք էսնաֆ  
զաիօնընը լաղվընը թալէպ իտէ-  
ճէքլէր:

— Էվվէլքի նուսիէմիզտէ զիր  
օլընան բօթա մէմուրը Ջազը-  
րօլըն չալտըզը բարալարն եէքի-  
նի 340,000 ֆրանգա պալիզ օլ-  
մուշ:

### ԲՈՒՍԻԱ

Թիւրքիատան Բուսիայա կէչ-  
մէքտէ օլան 30 էրմէնիլէր' բուս  
թօրաղընտա բուստա տուրան  
Քիւրտլէրտէն արանսըզա կէլուպ  
եագալանմըշլար: անլէրտէն եա-  
լընը 4 քիչի գաչմըշ, տիկէրլէր  
տէն խապէր եօգ տըր:

— Շուշիտէ թուլթուլար էրմէ-  
նի կէնճէրի սէրպէթ պըրա-  
զըլըշլար:

### ՄԻԻԹԵՆԷՎՎԻԷ

Բլուսիա Բրէնսլէրտէ Եօակիմ  
Ալպէրթ Պէրլին թէաթրօսընտա  
աթթրիսթ մատամ Մարի իլէ  
էվլէնէճէք, Բրէնս ալպէրթ 30

եաշընտա, մահիր բէսսամ վէ բէ-  
տէրինտէն 18 միլիոն ֆր. մէրաս  
ալմուշ տըր: Մատամ Մարի իտէ  
հէմ կիւզէլլիքտէ հէմ սահանա-  
աթտա էհէմմիլլէթսիզ օլմագտան  
մատտա սիննի տախի գըրգը  
կէչիլին իմիշ:

### ԹԻԻՃՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ, 9 Սեպտեմբեր

#### ՁԱԽԻՐԷ

|                  |               |             |
|------------------|---------------|-------------|
| ՊՈՒՂՏԱՅ          |               |             |
| Վազօն            | 50-55 լիպ.    | 7-30/10     |
| Արապա            | 52-58 լիպ.    | 7-/10. 40   |
| ԱՐԲԱ,            |               |             |
| Վազօն 100 քիլո   |               | 10. 10/25   |
| Արապա            | 42-47 լիպ.    | 6/6-40      |
| ԵՈՒԼԱՅ արապա     | 33/36 լպ.     | 4. 20/5.    |
| »                | 100 քիլո      | 11.11.25    |
| ՁԱՎՏԱՐ արապա     | 52/57 լիպ.    | 7/7. 20     |
| ՖԱՍՈՒԼԵՆ արապա   | 100 քիլ       | 20/27       |
| ՌԱՐԻՑԱ           | 100 քիլո      | — եօգ       |
| Արապա            | 100 քիլո      | եօգ         |
| ՏԱՐԸ արապա       |               | 6. 6/40     |
| ՔՕԼՕՁ արապա      | 55-60 լպ.     | 8. /8. 50   |
| ՄԻՍԻՐ 57-58 լպ.  | առապա         | 6. 40/7. 00 |
| »                | 100 քիլո      | 6. 20/9. 50 |
| Կիւնտէ վազօն     | 13/15 վէ      | 500-600     |
| արապա կէլմէքտէ   | վազօն մուամէ- |             |
| լէսի նարօլէտէ    | 20 ֆր. արապա  | մու-        |
| ամէլէսի նարօլէտէ | 20. 20        |             |

#### ՊԱԳԱԼԻՅԷ

Վարնա բէպտաթնտա պուպալլէյէ  
մալլէրին պու կէնքի ֆիլպթը, ալթուն  
ֆրանք իլէ:

|                       |                 |
|-----------------------|-----------------|
| ԳԱՀՎԷ                 | 2.15/ 2.25      |
| ՇԷՔԷՐ Նէմցէ           | .84             |
| ՇԷՔԷՐ քէսմէլ          | սանտըզ 42 00    |
| ԲԻՐԻՆՃ ճէնօլա չուվալը | 42.             |
| » Ֆիլիպէ              | » 36            |
| » Ինկիլիզ             | » 32            |
| Բիզօն                 | » 49.           |
| ԿԱՋ Սանտըզ            | 10 90           |
| ՁԷՑԹԻՆ եաղը քիլո      | 80-95           |
| ԳՈՒՐՈՒ իւզիւմ         | 45              |
| Եուսուլթա             | 100 ատէթի 4. 40 |

### ՕԹԷԼ ՍԱՄՍՈՆ

ԱՂԷՔԱՆԻ ՏՐԻԱ

Ճամի քեպանաի դեմ քիւ 18

Տիար Ս. Շէքերեանի վարչութեան  
տակ գտնուող այս ծովեղբերայ եւ  
օգուէտ պանդօկը իր մաքրութեամբ  
եւ ամեն կատարելութեամբ յանձնա-  
րարիլ է մեր հայրենակիցներուն: Այ-  
ցելուն հոն կը գտնէ նաեւ մաքուր  
ճաշարան մը արեւելեան եւ եւրոպական  
ճաշակով մաքուր եւ համաթամ կիրա-  
կուրներով Գիլները չափաւոր են:

Одговорникъ А. Курбетиянъ

печатающа Д. Тодоровъ С.не—Въ рѣз.